

**ՀԱՆՑԱՎՈՐ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՈՐՈՇ ԶՎՓԱՆԻՇՆԵՐ**

*Աղաբեկյան Ա. Ա. (ՀՀ ԱՆ ՔԿՎ, Վանաձոր, Հայաստան)
v hvk2006@rabler.ru*

*Հարությունյան Ա. Կ. (Վանաձորի հոգեբանական վերականգնողական
կենտրոն ՀԿ, Վանաձոր, Հայաստան)
vanadzorezv@mail.ru*

Ներկայացման ամս.՝ 16.07.2019

գրախոսման ամս.՝ 24.08.2019

տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոդվածում համառոտ վերլուծության է ենթարկվում հանցագործությունների իրավաբանական, հոգեբանական դասակարգումը, նշվում է, որ ի տարբերություն անզգույշ հանցագործությունների, խմբային հանցագործությունը երբեք չի կարելի համարել պատահական, որ այն նախապես մտածված է լինում և երբեմն նման խմբավորումներում կարող են ներգրավվել նաև պաշտոնատար անձինք՝ ստանձնելով մի կողմից մասնակցի, մյուս կողմից՝ լիդերի դերեր:

Հոդվածի նպատակն է՝ համառոտ վերլուծել հանցավոր խմբերի տեսակները՝ դրանց զարգացման աստիճանից և նպատակներից կախված: Հոդվածի խնդիրներն են՝ տեղայնացնել հանցավոր խմբավորումներին միջառարկայական ուսումնասիրության տիրույթում, ինչպես նաև տալ այն անձանց սոցիալ- հոգեբանական բնութագիրը, ովքեր կամա թե ակամա դառնում են «հանցագործ» սոցիալական դերի կրողը:

Հանգուցային բառեր՝ *հանցավոր խումբ, իրավագիտակցություն, պաշտոնական դիրքի չարաշահում, նպատակ, անզգույշ և ծանր հանցագործություններ:*

Ըստ Յու.Մ. Անտոնյանի՝

«Հանցագործի անձը օրենքին ենթարկվողի անձից տարբերվում է արժեքանորմատիվային համակարգի բացասական բովանդակությամբ և կայուն հոգեբանական առանձնահատկություններով, որոնց զուգակցումն ունի քրեաձին նշանակություն և յուրահատուկ է հենց հանցագործների համար»[4, էջ 77]: Առհասարակ նշված հայազգի հեղինակի տեսանկյունը շատ ուրույն է անձի հոգեբանական օտարման և հանցավոր վարքագծի միջև կապի տեսանկյունից[2], սակայն հոդվածի ծավալից ելնելով՝ այլ անդրադարձ դժվար է կատարել, բացի վերը նշվածը: Հանցավոր խմբավորումների կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ խմբային հանցագործությունների մասին խոսելիս առաջին հերթին մենք ելնում ենք այն բանից, որ տարբեր երկրներում, տարբեր հասարակարգերում բնականաբար տարբեր են ինչպես հանցագործության չափանիշները, այնպես էլ՝ դրա համար նախատեսված պատժի տեսակները: Տեսական վերլուծության մակարդակով հանցավոր խմբերի

վերլուծությունը մենք դիտարկում ենք հոգեբանության այն բաժինների տեսանկյունից, որոնցում անձը մի կողմից հանդիսանում է այս կամ այն խմբի անդամ և մյուս կողմից՝ իրավագիտակցության ու դրա խախտումների հետևանքով տվյալ պետության օրենքների և այլ իրավական ակտերի խախտման կրողը որպես: Ինքնին պարզ է, որ խոսքը կարող է գնալ մի կողմից՝ իրավաբանական և մյուս կողմից՝ սոցիալական հոգեբանության մասին, որոնց մեջ հենց գտնվում են մեզ հետաքրքրող խնդրի բաղադրիչները: Սոցիալական հոգեբանության տեսանկյունից մեր քննարկած հարցերը մեծամասամբ տեղայնացվում են իրական փոքր խմբերի մեջ³ [1, էջ 190- 234, 7, էջ 1-2], քանի որ հենց դրանք են հաճախ դառնում հանցավոր անձի համար ռեֆերենտային կամ անդամության խումբ կամ դրանցում է դրսևորվում անձի իրավագիտակցության խանգարումը համընդհանուր նորմերից կամ արժեքներից՝ երբեմն տարբերվելով, իսկ երբեմն էլ՝ հակադրվելով մակրո մակարդակի արժեքներին ու նորմերին: Հանցավոր կազմավորումների առավել պարզ տեսակին ընդունված է դասել այսպես կոչված պատահական հանցավոր խմբերը, որոնք կազմված են երկու և ավելի կատարողներից, հանցագործությունը կատարում են առանց նախնական համաձայնության, ունեն հոգեբանական համախմբվածության ամենացածր մակարդակը, առաջ են գալիս պատահական, անսպասելի ստեղծված իրավիճակում: Նման տիպի խմբերում բացակայում է հստակ հոգեբանական կառուցվածքը, ի հայտ չի եկել լիդերը, հանցագործության մասնակիցների որոշումները ինքնաբեր ծագած իրավիճակի ներգործությամբ են, հույզերի, տրամադրության ֆոնին⁴ [5, էջ 2]: Կան նաև միջանկյալ տիպի հանցավոր խմբեր՝ պատահականի և կազմակերպվածի միջակայքում: Նման խմբերը ծագում են պատահականի բազայի վրա, հատկապես եթե դրանց հաջողվում է չջախջախվել: Համատեղ հանցավոր գործողությունը մի քանի մարդու կողմից՝ կոչվում է հանցակցություն, որն իր իրականացման բարդության առումով կարող է համարվել պարզ կամ բարդ՝ դերերի բաշխման և մասնակցության տեսակի առումով: Հանցավոր խմբերում անձն ամբողջությամբ ընդունում է խմբի հանցավոր ուղղվածությունը, կիսում նրա հանցավոր մոտիվներն ու նպատակին հասնելու միջոցները: Դրա համար էլ անձն աշխատում է արդարացնել սպասելիքներն իրենից՝ խմբի այլ անդամների և լիդերի կողմից: Պետք է ասել, որ հենց հանցավոր խմբում է, որ նրա անդամների մոտ իջնում է պատասխանատվության զգացումը և գերիշխում է ամենաթողությունը, անպատժելիությունն ու խմբային պաշտպանվածությունը: Կազմակերպված հանցագործությունն իրենից ներկայացնում է կայուն հանցավոր խումբ, որն ունի համապատասխան նյութական բազա և կապեր իշխանական կառուցվածքներում՝ անօրինական հարստացման և հասարակությունից ինքնապաշտպանության համար: Կազմակերպված հանցագործությունը իր առջև դրված հանցավոր նպատակների հաջող իրագործման համար ունի պետական իշխանության հետ զգալի կապեր, ինչը զգալիորեն մեծացնում է նման խմբերի հասարակական վտանգավորությունը: Կազմակերպված հանցավորությունն ունի հետևյալ տեսակները. պրիմիտիվ կազմակերպված, որի կազմում տասից ոչ ավելի մարդ կա

և որոնք զբաղված են դրամաշորթությամբ ու խարդախությամբ: Միջին կազմակերպված հանցավոր խմբերը մի քանի տասնյակ մարդուց են կազմված, յուրաքանչյուրն ունի նեղ մասնագիտացում(զինվորներ, կատարողներ, թիկնապահներ, ֆինանսիստներ և այլն)⁵[6, էջ 1]: Նման խմբերը հիմնականում զբաղվում են կայուն դրամաշորթությամբ՝նեկետով, մաքսանենգությամբ ու թմրաբիզնեսով: Բարձր կազմակերպված հանցավոր խմբերն ունեն բարդ կառուցվածք, կազմված են մի քանի հազար մարդուց և դրանք սերտորեն փոխներգործում են կոռուպացված իրավապահների հետ, որոնցից ստանում են համապատասխան ինֆորմացիա: Նման խմբերի հիմնական նպատակը հանցավոր ճանապարհով բարձր շահույթներ ստանալն է: Հարկավոր է ընդգծել, որ կազմակերպված հանցագործության մակարդակի կտրուկ աճը հանգեցրել է ժամանակակից հանցագործի նոր տեսակի ձևավորման, ով հանցագործություն կատարելիս կարող է կիրառել տարբեր գիտություններից գիտելիքները և կիրառել տեխնիկայի նվաճումները: Ժամանակակից հանցավոր խմբերի ղեկավարներն աչքի են ընկնում բարձր կազմակերպչական ընդունակություններով, ունեն վերլուծական միտք, իսկ ամեն հինգերորդը՝ նաև բարձրագույն կրթություն⁶ [6, էջ 1-2]: Կազմակերպված կայուն խումբն ունի հստակ արտահայտված աստիճանակարգ: Դրա տեսակներից են նաև բանդաները: Որպես կանոն՝ խմբի կազմակերպչին խմբի անդամները ճանաչում են: Բանդաների բնութագրական գծերից մեկը հանդիսանում է դրա ազդեցությունից ազատվել ցանկացող մարդկանց հանդեպ բռնի, հարկադրական հարաբերությունների առկայությունը⁷[5,էջ 3]:Կրիմինալ առումով առավել կատարյալը և դրանով իսկ՝ամենավտանգավորը կազմակերպված հանցավոր խմբավորումների մեջ հանդիսանում են համախմբված կազմակերպված խմբերը, որոնք ծանր կամ առավել ծանր հանցագործություններ կատարելու համար են ստեղծվում: Կազմակերպված հանցավոր խմբավորումների առավել ակտիվ անդամները մեծ մասամբ տղամարդիկ են, միջինը՝ 22-35 տարեկան: Նման խմբերի անդամների կեսից ոչ պակասը նախկինում դատված են, աչքի են ընկնում հանցավոր պրոֆեսիոնալիզմի գրեթե բոլոր հատկանիշներով: Դրանցից են. հանցավոր զբաղմունքի կայունությունը, հանցավոր գիտելիքների ու հմտությունների բավական բարձր մակարդակը, հանցավոր գործունեությամբ գոյության հիմնական միջոցների ստացումը, սոցիալ միջավայրի հետ ամուր կապերը⁸[5, էջ 4]: Այսպիսով՝ պրոֆեսիոնալ հանցագործը մարդ է, ով սիստեմատիկորեն զբաղվում է հանցավոր գործունեությամբ, կիրառում կրիմինալ ճանաչողություն և փորձ և այլն: Հենց նման հանցագործներն են որպես կանոն՝ դառնում կատարվող հանցագործությունների կազմակերպիչը, ակտիվ մասնակիցը: Նրանց անձի առաջատար գծերն են բռնի-շահադիտական ուղղվածությունը, ագրեսիվությունը, դաժանությունն ու ցինիզմը, բացառիկ սանձարձակությունն ու այլ անձանց հանդեպ արհամարհական վերաբերմունքը: Կազմակերպված հանցավոր խմբավորման մասնակիցների մեջ հատուկ առանձնանում է դրանց լիդերի անձը, ով հաճախ ունի կրիմինալ ստատուս («օրենքով գող»): Քրեագետների տվյալներով՝ կենտրոնական անձը հանդիսանում է լիդեր-

կազմակերպիչը, ով ոչ միայն օգտագործում է կամ կիրառում հանցագործություններ կատարելուն հարմար իրավիճակ, այլև ստեղծում է այն⁹[5, էջ 5]: Ժամանակակից քրեագիտության մեջ ավանդական հանցավոր խումբ ասելով հասկանում են փոքր ոչ պաշտոնական խումբը, որը հանդիսանում է քրեական գործունեության միասնական օբյեկտ, միավորվում է մարդկանց համատեղ հակաիրավական գործունեության հիման վրա և ձգտում են ընդհանուր հանցավոր նպատակի ձեռքբերմանը¹⁰ [4, էջ 90]: Գոյություն ունի այդ ավանդական հանցավոր խմբերի հետևյալ տիպաբանությունը. պարզ կազմակերպված խումբ, բարդ կազմակերպված խումբ, կազմակերպված հանցավոր կազմավորում, հանցավոր կազմակերպություն, պրոֆեսիոնալ հանցավոր առաջնորդների կոոպերացիա («օրենքով գողեր»): Գործնականում ցանկացած կազմակերպված հանցավոր կազմավորման մեջ կարելի է առանձնացնել երեք մակարդակի կառուցվածքային օղակներ. ամենաստորին մակարդակում կատարողական տարրերն են, միջինում՝ կազմակերպչական-վերահսկողական օղակները և անվտանգության խմբերը, վերևներում՝ ղեկավարող օղակները(առաջնորդների խմբեր, էլիտար խումբ)¹¹ [4, էջ 104]: Այսպիսով, ամփոփելով կարելի է ասել, որ եթե անհատական մակարդակում մարդը կարող է դառնալ անզգույշ հանցագործ, ապա խմբային առումով դա անհնար է: Այստեղ արդեն՝ կարող են տեղ գտնել պատահական, բայց ոչ անզգույշ հանցագործությունները և, որ առավել բարդ ու վտանգավոր են՝ կազմակերպված հանցագործությունները, որոնք այս կամ այն կերպ վնասում են երկրի զարգացմանն ու մարդկանց ազատ, լիարժեք կենսագործունեությանը: Որքան էլ փորձեր արվեն հանցագործության մեջ հաշվի առնել գեները և այլ գործոններ¹²[3, էջ 5-17], անձի ու նրա գիտակից պատասխանատու վերաբերմունքի կարևորությունն անհնար է թերազնահատել:

Գրականություն

- 1 **Андреева Г.М.** Социальная психология, Аспект Пресс, Москва, 2008, 363с.
- 2 **Антонян Ю.М.** Психологическое отчуждение личности и преступное поведение, Ереван, „Айастан,, ,1987, 206с.
- 3 **Дубинин И.И. Карпец В.Н. Кудрявцев Н.П.** Генетика, поведение, ответственность, Москва, Политиздат, 1989, 351с.
- 4 **Шиханцов Г.Г.** Юридическая психология, Учебник для вузов, Москва, Зерцало, 1998
- 5 www.redov.ru/psihologija/yuridicheskaja, стр.1-5
- 6 <https://scicenter.online/knigi-yuridicheskaya-psihologiya>, стр. 1-2
- 7 https://studme.org/149405115379/psihologiya/psihologiya_gruppovogo_prestupnogo_povedeniya, стр.1-2

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕСТУПНЫХ ГРУПП И НЕКОТОРЫЕ КРИТЕРИИ ИХ КЛАССИФИКАЦИИ

Агабекян А.А. (ЛРО ГСП, Ванадзор, Армения)

Арутюнян А.К. (ОО Ванадзорский психологический реабилитационный центр, Ванадзор, Армения)

В статье кратко анализируется юридическая и в то же время психологическая классификация преступлений, отмечается, что по сравнению с неореднамеренными преступлениями тяжкие групповые преступления нельзя считать случайными, что они всегда являются преднамеренными и в их процессе могут вовлекаться и чиновники, как в качестве соучастника и исполнителя, так и в качестве лидера.

Ключевые слова: преступная группа, правовое сознание, цель, непреднамеренные и тяжкие преступления, использование служебного положения.

THE PSYCHOLOGICAL CHARACTERISTICS AND CLASSIFICATION CRITERIA OF CRIMINAL GROUPS

Aghabekyan A. A. (LRD SPS, Vanadzor, Armenia)

Harutyunyan A. K. (Vanadzor Psychological Rehabilitation Center NGO, Vanadzor, Armenia)

The legal classification of crimes is briefly described in the article, it is noted that, unlike unscrupulous crimes, group crime can never be considered casual as it is pre-thought and occasionally officials may be involved in such groups assuming the roles of participants on one hand and the roles of leaders on the other hand.

Keywords: criminal groups, jurisprudence, misuse of official position, aim, careless and grave crimes.